

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԻՆՉՈՒԻ ԿԸ ՓՆՏՈՒԵՍ ՅԻՍՈՒՍԸ

«Դուք գիտեք կը փնտո՞ւք՝ ո՛չ թէ որով-
հետեւ հրաշքներ տեսա՞ք, այլ՝ որովհետեւ
այդ հացէն կերա՞ք եւ կշտացա՞ք» (Յհ.
6.26): Յիսուսի այս խօսքը ուղղուած է
բոլոր անոնց, որոնք զինք կը փնտոնեն եւ
իրեն կը դիմեն իրենց սեփական շահերուն
համար միայն: Յիսուս միջոց մը չէ, որով
հասնինք մեր նպատակներուն: Սիրելի՛
բարեկամ, դուն ինչո՞ւ կը փնտոնես Յիսու-
սը: Սովորական հացի՞ համար: Տունի
տէր դառնալո՞ւ համար: Գործ գտնելու
կամ գործի մէջ առաւել յաջողութիւն գտ-
նելո՞ւ համար: Ինչո՞ւ կը փնտոնես Յիսու-
սը: Ինչո՞ւ աղօթքի կը կենաս: Փափա՞ք
ունիս Պօղոսի նման զինք նանչնալու, թէ՛
աշխարհաբոյր փափաքներդ կատարելու
համար է որ կ'աղօթես: Ինչո՞ւ կը փնտոնես
Յիսուսը: Աւելի նիշդը, կը փնտոնե՞ս
Յիսուսը:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր, մեղքերուս համար սգացող եւ
արտաստող դարձո՛ւր զիս, որովհետեւ
ծանրաբեռնուած եմ անօրէնութեամբ եւ
յագեցած՝ աղտեղի խորհուրդով: Շատ նե-
րեցիր ինձի, որովհետեւ չպատժեցիր
մարմինի մէջ. սարսելով կը դողամ, թէ
[արդեօք] ինձի համար [աններելի] պիտի
չմնա՞ն այսպիսի չարիքները: Կ'աղաչեմ
բարերար Տէր զիս ատեան մի՛ կանչեր եւ
մի՛ մատներ զիս տանջանքներու, այլ՝
փրկէ՛ գեհեճի հուրէն ու ազատէ՛ վտանգնե-
րէն, ողորմէ՛ եւ ազատէ՛ վտանգներէն, ո-
ղորմէ՛ եւ ազատէ՛ զիս, որովհետեւ միայն
Դ-ո՛ւն մարդասէր ես:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

**ԵԹԷ ԿՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ ԹԵ Ո՞Վ Է
ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՍԱՐԴԸ,
ԿԱՐԴԱ՛ Սաղմոս 24**

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիու-
թեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որով-
հետեւ ի՛նք անոր հիմերը դրաւ ծովերուն
վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց
գայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելով.
ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ
կանգիլ: Ան, որ մաքուր է իր գործերով ու
մտածումներով: Ան, որ ստուքեան անձնա-
տուր չեղաւ, եւ նենգութեամբ երդում չրաւ:
Այսպիսին Տիրոջ օրհնութիւնը պիտի
ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք
փրկող Աստուծմէ: Այսպէս կ'ըլլայ աստ-
ւածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայու-
թեանդ գալ, ո՛վ դուն՝ Աստուածը մեր հայ-
րերուն:

Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ,
թող բացուի՛ն յաւիտեանականութեան
դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր
թագաւորը: Ո՞վ է այս փառաւոր Թագա-
ւորը: Տէ՛րն է, հօր եւ անպարտելի, Տէ՛րը,
պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք
ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող
բացուի՛ն յաւիտեանականութեան դռները,
որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը:
Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: Ամենակալ
Տէ՛րը, ի/նքն է փառաւոր Թագաւորը:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ- թերթը ամէն
Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին,
եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝
Facebook-ի վրայ փնտոնել «Jerak կամ
ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կար-
դալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak](#) Ծրագրի թերթ



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՏԵՂ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ , 23 ՕԳՈՍՏՈՍ 2020

ԹԻԻ 34

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Առ. 11.30-12.4: Զք. 2.10-13: Բ. Կր. 6.16-7.1
ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԳՈՒԿԱՍԻ 1.39-56

**ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ԳՈՒԿԱՍԻ 1.39-56**

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի
լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Չաքարիայի տունը մտնելով՝ Եղի-
սաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին
մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն
ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է զաւակը, որ կը կրես
որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ
երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛
քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի
կատարուին»:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեն. Ահա հոգիս կ'ուրախանայ Աս-
տուծմով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեգութիւնը: Ասկէ
ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հօրոն Աստուած ինձի
համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակնե-
րուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազու-
կով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդնե-
րով: Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիք-
ներով լիացուց, մինչ հարուստները դատարկածեռն արձակեց: Պաշտպան եղաւ
իր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոս-
տացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն:

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

ԱՌԱԿՆԵՐ

Եթէ այսպէս քիչ մը քնանաս, քիչ մը հանգչիս, քիչ մը մրափէս, քիչ մը
ձեռքերդ կուրծքիդ ծալլած մնաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի
մը նման քեզ պիտի դիմաւորէ եւ չքաւութիւնը ժիր սուրհանդակի մը նման դրանդ
առջեւ պիտի կանգնի: (Առակ 6.10-11)

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱԿԱՆԵՐ**

**ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ
11.30--12.4**

Արդար գործերու վարձքը կեանք է. անօրէնները վաղահասօրէն պիտի կորսուին: Երբ արդարը հագի կը փրկուի, ի՞նչ պիտի ըլլայ ամբարիշտին ու մեղաւորին վիճակը:

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի. յանդիմանութիւն աստղը անմիտ է: Լաւ մարդուն Տէրը շնորհիք կու տայ, միևն զմի դատապարտէ չարամիտը: Զարութիւնը մնայուն յաջողութիւն չի բերեր, միևն արդարներու արմատը ո՛չ ոք կրնայ շարժել: Առաքիճի կիմ մը ամուսինին համար թագ է, միևն անպատիւ կիմը անոր ոսկորները կրծող քաղցկեղի կը նմանի:

**ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
2.10-13**

«Երգէ՛ եւ ուրախացի՛ր, Երուսաղէմ, Սիոնի աղջիկ, որովհետեւ ահա ես կու գամ քու մէջդ բնակելու համար» կ'ըսէ Տէրը:

«Այն օրը բազմաթիւ ազգեր Տիրոջ պիտի ապաւինին եւ իր ժողովուրդը պիտի ըլլան, եւ ինք քու մէջդ պիտի բնակի: Այն ատեն պիտի գիտնաս, թէ ամենակալ Տէրը զիս դրկեց քեզի:

Սուրբ երկրին մէջ Տէրը Հրէաստանը պիտի առնէ որպէս ժառանգութիւն եւ կրկին Երուսաղէմը պիտի ընտրէ որպէս բնակութիւն:

Տեսէ՛ք Տէրը եւ լոնցէ՛ք, ով մարդիկ, որովհետեւ անիկա դուրս եկաւ իր սուրբ բնակութենէն»:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԷՆ



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՍԱԿԸ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
6.16 - 7.1**

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ ժողովուրդս»: Ահա թէ ինչո՛ւ Աստուած կը հրահանգէ մեզի. «Անջատ եւ հեռու կեցէ՛ք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչի՛ք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի Հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլա՛ք» կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի եղած են: Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մե՛նք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

Թող որ ամենօրեայ հոգեւոր սնունդի աղբիւրը դառնայ մեր Աստուածաշունչը:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԷՆ**

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՅՈՎԱԿԻՄԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ

Յովակիմ եւ Աննա, պանծալի եւ գովելի, մարդացեալ հրեշտակներ են եւ պարծանք մաղկային ազգին: Անոնք Աստուծոյ կողմէ ընտրուեցան ծնողքը ըլլալու Աստուածորդիին ծնողքին, եւ իրական նախահայրը եւ նախամայրը տիեզերքի Փրկիչին:

Աստուած ուզեց, որ նախ Յովակիմ եւ Աննա անգաւակ մնան, որպէսզի ծերութեան եւ ամրութեան մէջ հրաշագործէ անոնց հրաշալի գաւակ մը՝ սահմանուած իր Միածինը ծնելու:

Յովակիմ եւ Աննա բարեպաշտ, հաւատացեալ եւ միշտ Աստուծոյ ապաւինելով կ'աղօթէին: Օր մը աղօթքի ատեն Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Աննային եւ ըսաւ. «Աննա՛, Աննա՛, Աստուած լսեց քու աղօթքդ, եւ ահա պիտի յղանաս եւ պիտի ծնանիս մանուկ մը, եւ անոր անունը պիտի տարածուի համայն երկրի վրայ»:

Աննա ըսաւ. «Կենդանի է իմ Տէր Աստուածս: Եթէ գաւակ մը ծնանիմ, գայն Աստուծոյ պիտի ընծայեմ՝ Սամուէլի մօր՝ Աննայի նման եւ իմ գաւակս ալ Աստուծոյ տաճարին պաշտօնեայ պիտի ըլլայ իր կեանքի բոլոր օրերուն»:

Աստուծոյ հրեշտակը անոր ամուսինին քով ալ իջաւ եւ ըսաւ անոր. Յովակիմ, Աստուած լսեց քու աղօթքդ: Գնա՛ տունդ: Քու կիմը Աննա պիտի յղանայ, եւ ձեզի եւ ամբողջ երկրին ցնծութիւն պիտի ըլլայ:

Երբ լրացան օրերը, շնորհանունն Աննա ծնաւ իր մանուկը՝ շնորհալի դուստրը եւ անունը կոչեց Մարիամ, որ կը նշանակէ բարձրութիւն, տիրութիւն, լուսապայծառ, աստղ ծովու, եւ եւայլն, որոնք լաւ կը յարմարին մեր տիրամօր:

Երբ մանուկը երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա առին Մարիամը եւ տարին Տիրոջ տաճարը եւ ընծայեցին Աստուծոյ՝ ըստ իրենց ուխտին, եւ դրին զինք Աստուծոյ պաշտամունքին մէջ՝ ուրիշ կուսաններու հետ՝ որոնք կը բնակէին տաճարի կուսաստանին մէջ ըստ ականդութեան, Մանուէլի դուստրին՝ Աննա մարգարէի դաստիարակութեան տակ:

Բայց քանի որ կոյսին տարիքը բաւարար չէր ուրիշներու հետ բնակելու համար, քահանայապետը ծնողքին ըսաւ՝ որ տանին տունը եւ անբծութեամբ պահեն, եւ երբ եօթը տարեկան ըլլայ՝ բերեն եւ դնեն նոյն կուսանոցին մէջ: Եւ այնպէս ըրին:

Այնուհետեւ Մարիամ որպէս հոգեղէն Սերովբէ, եօթը տարի եւս ապրեցաւ կուսաններուն հետ եւ ապա, ըստ Աստուծոյ տնօրինութեան նշանուեցաւ Յովսէփ արդարի հետ եւ տասնհինգ տարեկանին ծնաւ անարատ կուսութեամբ աշխարհի Փրկիչը, Յիսուս՝ որդի Աստուծոյ:

Իսկ Աստուածածինի ծնողքը՝ Յովակիմ եւ Աննա, խոր ծերութեան մէջ կանչուեցան առ Աստուած:

Սովորական կարծիքը այն է, թէ Յովակիմ Աննայէն առաջ վախճանեցաւ, եւ Աննա արժանի եղաւ տեսնելու թողը՝ Յիսուս Քրիստոսը Աստուածորդին՝ մարմնապէս, եւ Փրկիչի մանկութեան օրերուն վախճանեցաւ եւ թաղուեցաւ իր ամուսինին գերեզմանը՝ Գեթսեմանիի ձորին մէջ:

Յովակիմ եւ Աննա յատուկ տօն ունին, որ այս տարի կը զուգադիպի 25 Օգոստոսին: